ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ 1917 Թ.

Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

Թիկունքից զինվորների ստացած նամակները և հատկապես ռազմաճակատից թիկունք՝ հարազատներին գրած զինվորական նամակները, ամբողջությամբ վերցրած, ժամանակագրական հաջորդականությամբ բացահայտում են բանակում տիրող նյութական, սանիտարական դրության, սպաների կամայականության, ռազմական մուշտրայի և բազմազան այլ երևույթների նկատմամբ զինվորների ակտիվ վերաբերմունքի պատկերը։

Այդ նամակները, որ Վ. Ի. Լենինը դասում էր ռևոլյուցիոն շարժման այնպիսի դրսևորումների շարքը, ինչպիսիք էին խմորումները, բողոքները, խրամատներում եղբայրացումը, գործադուլները և ցույցերը[1], մեծ մասամբ աշխատավոր մարդկանց նամակներ են։ Նրանցում երբեմն նկատվող չափազանցությունները, սուր տոնն ու գրելաձևը չեն նվազեցնում նամակների պատմական արժեքն ու օբյեկտիվությունը։ Աննպատակ, ավազակային պատերազմից ու թիկունքում ոնքացող հարազատների անապահով վիճակից դառնացած զինվորը նամակում պարզությամբ ու շիտակությամբ բացում էր իր սիրտը, ոտնատակ տալով «պատշաճ» գրության բոլոր կանոնները։ Զինվորական նամակները լարափակոցների ետևից և թիկունքային դաժան շահագործման ու աղքատության մոայլ առօրյայից եկող ժողովրդական զայրույթի ու հասունացող քաղաքական գիտակցության անբռնազբոսիկ ճիչն էին։

Չնայած իրենց մեծ արժեքին, մինչև այժմ Կովկասյան (և ոչ միայն Կովկասյան) բանակի զինվորական նամակները գիտական ամբողջական կարգավորման ու մշակման չեն ենթարկվել։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի տասնամյակի կապակցությամբ 1927—1928 թթ. լույս տեսան զինվորական նամակների փոքրածավալ ժողովածուներ, որոնցում, սակայն, Կովկասյան բանակի զինվորների նամակները չափազանց փոքրաթիվ են ու պատահական, հետևաբար և չեն կարող լրջորեն օգնել ուսումնասիրողներին։ Զարմանալի չէ, որ 1914—1918 թթ. իրադարձությունները ուսումնասիրող անդրկովկասյան պատմաբանները, չնչին բացառությամբ, կամ անցնում են զինվորական նամակների կողքով, կամ դրանք օգտագործում են պատահականորեն։

Մեր երկրի կենտրոնական և բազմաթիվ այլ արխիվներում ցրված են Կովկասյան բանակի, այդ թվում նաև այլ ռազմաճակատներից ու թիկունքից դեպի Կովկասյան բանակ ուղարկված նամակները, որոնք տեղ կհասնեին և պատմական գիտության համար կկորչեին, եթե եռանդուն չգործեին ցարական և ապա ժամանակավոր կառավարության «պատիվը» փրկող գրաքննչական օրգանները։

Ուշագրավ է այն, որ Կովկասյան բանակի գրաքննչական հրահանգներից մեկում ասվում էր, որ զինվորների գրած և ստացած նամակների հիման վրա պարբերաբար կազմվող գրաքննչական ամփոփագրերը, որպես անկողմնակալ կերպով հավաքված նյութերի ամբողջություն, միաժամանակ ունեն և պատմական մեծ արժեք. նրանք կարող են դրվել Ռուսաստանի ապրած իրադարձությունների ուսումնասիրման հիմքում»[2]։

Զինվորական նամակները կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի. 1) Կովկասյան ճակատից թիկունք և տարբեր զորամասեր ուղարկված նամակներ, 2) Կովկասյան բանակի թիկունքային զորամասերից ուղարկված նամակներ, 3) թիկունքից Կովկասյան բանակի զինվորներին գրված նամակներ, 4) այլ ռազմաճակատներից ու զորամասերից Կովկասյան բանակի զինվորներին հասցեագրված նամակներ։

---

1 *Տե՛ս* Վ. Ի. Լ ե ն ի ն, *Երկեր, հատ. 22, էջ 226։*

2 Центральный государственный военно-исторический архив — ЦГВИА *(այսուհետև՝ ԿՊՌՊԱ), ֆ. 1300, ց. 1, դ. 115, թ. 51։*

Այդ նամակների ճնշող մեծամասնությունը ուղղակիորեն առնչվում է Կովկասյան բանակի հետ, հիմնականում անդրկովկասյան իրադարձությունների հետ։ Սակայն նրանց ամբողջությունը չի սահմանափակվում միայն Կովկասով, այլ ինչ որ չափով արտացոլում է ողջ երկրի տնտեսական ու քաղաքական իրավիճակը, ռազմաճակատների ու թիկունքի կյանքը, որոշակի էտապում մասսաների բոլշևիկացման բուռն պրոցեսը։ Դրանում էլ առաջին հերթին պետք է տեսնել զինվորական նամակների պատմական արժեքը։

Հասկանալի է, իհարկե, որ շատ արժեքավոր նամակների զգալի մասը ոչնչացվել կամ անհայտացել է։ Ռազմաճակատ ու պահեստային զորամասեր չէին հասնում հատկապես թիկունքից զինվորներին հասցեագրված ձրի նամակները։ Այդպիսիք իբրև կանոն չէին ստուգվում և առաջին իսկ առաքման կետում այրվում էին։ Շատ նամակներից պատառիկներ են հասել, միտումնավոր կերպով ընտրված հատվածներ, որոնք հետաքրքրել են այս կամ այն գրաքննչին կամ դատական ու ժանդարմական օրգաններին։

Գրաքննչական հաշվետվությունները վկայում են, որ արդեն 1916 թ. հոկտեմբերին զինվորական նամակների մոտ 50 տոկոսը, ձգձգվող պատերազմի պատճառով, ներծծված էր անկումային տրամադրություններով, նկատելիորեն աճող բողոքով[3]։ Մասսաների հասունացող ռևոլյուցիոն-դեմոկրատական տրամադրություններն են արտացոլված նախափետրվարյան ժամանակաշրջանի նամակներում։ Ժամանակագրական հաջորդականությամբ, նամակ առ նամակ, պարզ է դառնում, որ երկրում հասունանում էր ռևոլյուցիոն իրադրությունը։ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակից հետո նամակներում պատերազմի, կյանքի թանկացման նկատմամբ աշխատավորների շարունակվող դժգոհությանը զուգընթաց, առժամանակ դրսևորվում է նաև պաթետիկ ոգևորություն, որը ավելի շատ փետրվարյան ռևոլյուցիայից մասսաների ունեցած մեծ սպասելիքների, հույսերի արտացոլումն է, քան թե գոյություն ունեցող իրավիճակի գովքը։

Ապրիլյան ճգնաժամը և նրանից հետո արագացող ռևոլյուցիոն պրոցեսը, մասնավորապես հունիսյան, հուլիսյան իրադարձություններն ու կոռնիլովշչինան լայնորեն արտացոլված են Կովկասյան բանակի զինվորների նամակներում։ Որքան մոտենում էր Հոկտեմբերը, այնքան ավելի գիտակից էր դառնում զինվորը։ Նա ավելի ու ավելի ճիշտ էր ըմբռնում երկրում կատարվող դասակարգային տեղաշարժերը։ Աշխատավորական իր բնազդով և քաղաքական հասունացող գիտակցությամբ նա սկսում էր պարզ տեսնել դասակարգերի, քաղաքական պարտիաների, նրանց առաջնորդների վարքագծի ներքին բովանդակությունը, կարողանում էր խոսքը տարբերել գործից, իսկական սոցիալիստական քաղաքականությունը՝ մանր բուրժուական աղմուկից, ժողովրդին ծառայելը դեմագոգիայից։

Թիֆլիսից գործող բանակ հասցեագրված մի նամակում զինվորը գրում էր. «Բարև թանկագին եղբայր Իլյա Յակովլևիչ. քո նամակը ստացա, որից երևում է, որ իմ նամակները... դուք չեք ստացել։ Հին ռեժիմի օրոք ինքնակալ Նիկոլայի ցենզուրան էր, որը ստուգում ու թույլ չէր տալիս ազատ արտահայտելու ժողովրդի կամքը, իսկ այժմ Կերենսկու գրաքննությունը նույնպես վախենալով բոլշևիկյան տակտիկայից ստուգում է, և նամակները այդ պատճառով էլ տեղ չեն հասնում։

Կերենսկին և կոմպանիան վախենում են, որ զինվորները կիմանան ճշմարտությունը և կասեն կորչի համաձայնողական քաղաքականությունը։ Ձեռ մոտ՝ ճակատում, ասում են, որ բոլշևիկները բուրժույներ են, որ բոլշևիկները չեն ցանկանում փոխարինել տանջված զինվորներին, որոնք արդեն երեք տարի է, ինչ ընկած են դիրքերում։

Չէ, թանկագին Իլյուշա, մի հավատա, դա խարեություն է. բոլշևիկը՝ դա չքավորագույն գյուղացին է ու բանվորը, որին և մենք չքավորներս ենք պատկանում. միայն նրանք, բոլշևիկներն են պահանջում հաց, խաղաղություն, հող գյուղացիությանը և ազատություն, բայց այդ բանի համար նրանց գնդակահարում են և մեզ զինվորներիս, մնում է ձեռք առնել ամենաեռանդուն միջոցներ պաշտպանելու բոլշևիկյան կազմակերպությունները։ Մի լսեք գնդապետներին ու գեներալներին, որոնք մարտին զարդարվել էին կարմիր ժապավենով. նրանք չեն լինի և չեն էլ եղել ռևոլյուցիոներներ, իսկ ինչպես եղել են արյունախում գազաններ, այդպես էլ մնացել են — ահա իմ խորհուրդը, հիշի՛ր, եղբայր...»[4]։

Զինվորական նամակները անցնում էին կրկնակի գրաքննությունից։ Նախ՝ ռազմաճակատում նրանք պետք է հաղթահարեին զինվորական հանձնաժողովի դիմադրությունը և ապա անցնեին

---

[3] «Борьба классов», 1934, № 9, էջ 14։

[4] ԿՊՌՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 99, 2-րդ մաս, թ. 926—927։

հասցեագրված օկրուգի ռազմական գրաքննության պատնեշը։ Պետք է նշել, որ զինվորական հանձնաժողովը միշտ չէ, որ դրսևորում էր անհրաժեշտ զգոնություն, և ռևոլյուցիոն բովանդակությամբ շատ նամակներ էին հասնում օկրուգային ռազմական գրաքննությանը, որը և զտում էր այդ նամակները «ռևոլյուցիոն վիրուսից»։ Թաքվից Կովկասյան ռազմաճակատ հասցեագրված մի նամակում հեղինակը, լավ իմանալով ցարական գրաքննության բարքերը, զայրույթով գրում էր. «...Նորություններ շատ կան, բայց նրանք կծան են. ես սկզբում գրեցի, բայց վախեցա և պատռեցի... որքան ծանր է, երբ ցանկանում ես ասել ճշմարտությունը, բայց և չի կարելի»[5]։

Առավել գիտակից զինվորները գիտեին ռազմական գրաքննության իսկական արժեքը և իրենց հատուկ վճռականությամբ ու պարզ ժողովրդական հումորով դաս էին տալիս այդպիսի գրաքննիչներին։ Ուշագրավ է 1917 թ. հունիսի 8-ին Կովկասյան բանակից «Կովկասյան ռազմական գրաքննությանը» հասցեագրված մի խմբային նամակ։ «...Ողջույն պարոն բուրժույներ,— գրում էին զինվորները այդ նամակում։— Խնդրում ենք ձեզ, խնդրում խոնարհաբար, մեր նամակները չպահել։ Երևի ձեզ, հարբելիս, ժամանակ չկա կատարելու ձեր ծառայության պարտքը, կամ էլ թե շատ են ուռել ձեր գրպանները, ընկեր բուրժույներ։ Չպետք է քնել, այլ վաղ վերկենալ, շտապ ստուգել և արագ ուղարկել նամակները։ Ես ձեզ չեմ հանդիմանում, որ դուք ստուգում եք մեր նամակները։ Դուք, հավանաբար, կորցրել եք ողջ խիղճը. բավական է ծաղր ու ծանակի ենթարկեք ձեր եղբորը. ես ձեզ այլ կերպ չեմ կարող կոչել, քան հակաքրիստոնյաներ։ Ընկեր բուրժույներ, խնդրում ենք մոռանալ անցյալը, կպնել նորին. դեհ, չէ որ մենք թույլ չենք տա, որ վերադառնա հին ռեժիմը. բոլորս կմեռնենք ազատության համար և ձեզ կչարդենք, իսկ ցարիզմը այլևս չի լինի... խնդրում ենք պատասխան»[6]։

Ռազմա-գրաքննչական յուրաքանչյուր կետ պարբերաբար, ամիսը երկու անգամ, զինվորական նամակների հիման վրա կազմում էր ամփոփագիր, նրան կցում առավել տիպական «անբարեհույս» նամակները և ուղարկում Կովկասյան զինվորական օկրուգի ռազմա-գրաքննչական բաժին, որտեղ և կազմվում էր ռազմաճակատի, թիկունքային զորամասերի և թիկունքի բարոյա-քաղաքական տրամադրությունները և ռազմական ոգին ներկայացնող ամփոփագիր։ Կովկասյան բանակի ռազմական գրաքննության գլխավոր խնդիրը բանակի ու թիկունքի տրամադրությունների օբյեկտիվ պատկերի բացահայտումն էր։ Հրահանգներից մեկում Կովկասյան ռազմական գրաքննության խնդիրները շարադրելիս նշվում էր, որ «...զինվորների տրամադրություններն ու նրանց բարոյական ոգին հանդիսանում են պատերազմի կարևորագույն շարժիչ գործոններից մեկը», հետևաբար նրա օբյեկտիվ լուսաբանումը ռազմական գրաքննության կողմից «արտակարգ կարևոր է բանակի բարձրագույն հրամանատարական կազմի համար, որովհետև այդ տրամադրությունները առաջին հերթին հաշվի են առնվում այս կամ այն օպերատիվ որոշումներն ընդունելիս»։ Որոշակիորեն սահմանվում էին գրաքննչական օրգանների անմիջական խնդիրները. «Ամփոփագրեր կազմելիս ռազմական գրաքննիչները,— ասվում էր այդ փաստաթղթում,— ոչ մի բոպե չպետք է մոռանան ամփոփագրերի նպատակները և նյութ ընտրելիս պետք է իրենց ստիպեն հրաժարվելու ինչպես ռազմական, այնպես էլ հասարակական-քաղաքական, թիկունքային կյանքի այս կամ այն երևույթների նկատմամբ ունեցած համակրանքից և հակակրանքից։ Գրաքննիչները, որպես նյութ հավաքողներ, պետք է նամակներից ընտրելու ուղիով բազմակողմանիորեն... լուսաբանեն.... հարցերի ոչ միայն դրական, այլև բացասական կողմերը։ Ամփոփագիրը պետք է ընդգրկի ոչ միայն ճակատը, այլ նաև թիկունքը։ Այդ վերջինը սերտորեն կապված է առաջինի հետ։ Թիկունքի տրամադրությունը փոխանցվում է ճակատին և ազդում վերջինի հոգեբանության վրա, հետևաբար թիկունքը, որպես բանակի վրա ազդելու գործոն, պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի, և հասկանալի է, խստագույն օբյեկտիվությամբ»[7]։

Հասունացող քաղաքական իրադարձությունների ազդեցությամբ ռազմական շարքային (և ոչ միայն շարքային) գրաքննիչների մի մասը իր գործունեությամբ նպաստում էր ռևոլյուցիայի հասունացմանը։ Այդ գրաքննիչները աշխատում էին «չնկատել» գիտակից զինվորների ու աշխատավորների այն նամակները, որոնք պարունակում էին «չթույլատրված հաղորդագրություններ», քաղաքական ընդհանրացումներ։ Այդպիսի նամակների մի մասը բաց էր թողնվում ռազմաճակատից թիկունք և ընդհակառակը։ Քիչ չեն փաստերը, երբ այդպիսի գրաքննիչները դատապարտվում և ռևոլյուցիոն զինվորների ու աշխատավորների հետ մեկտեղ ռազմաճակատի առաջին գիծ կամ տաժանակիր աշխատանքի էին ուղարկվում։

---

5 Նույն տեղում, գ. 115, թ. 135։

6 Նույն տեղում, գ. 99, թ. 228։

7 Նույն տեղում, գ. 115, թ. 51։

Այժմ տեսնենք, թե ինչպես էին արտացոլվում պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի հարցերը, ողջ երկրում ու Անդրկովկասում 1917 թ. հունիսին տեղի ունեցող իրադարձությունները Կովկասյան ռազմաճակատի զինվորական նամակներում։

Կովկասյան ռազմաճակատը իր դրությամբ տարբերվում էր Հյուսիսային, Արևմտյան և մյուս ռազմաճակատներից նրանով, որ պատերազմի հենց սկզբից բանակն այստեղ գործում էր թշնամու տերիտորիայում։ Երեք տարի անընդհատ ցարիզմը և ապա ռուսական բուրժուազիան այդ հարձակվող բանակը գովել ու փառաբանել էին իբրև «ռուսական զենքի փառքը սրբագործող» բանակ, իբրև հարվածային մի ուժ, որը ձեռք մեկնելով դաշնակից անգլիական իմպերիալիստական բանակին, շուտով դուրս էր գալու Տիգրիսի ու Եփրատի գետաբերանը, լվացվելու էր Պարսից ծոցի — Հնդկական օվկիանոսի ջրերով ու ռուսական կապիտալին ներթափանցման ուղի էր հարթելու դեպի Միջին ու Մերձավոր Արևելք։ Կովկասյան բանակի այսպիսի դրությունը պատերազմի սկզբում ավելի շեշտված, իսկ հետո՝ նկատելիորեն պակաս չափով «պատրիոտիզմի» մոլուցքի մեջ էր պահում բանակի զգալի մասը։ Բուրժուազիայի հնարած ու նրան ձեռնտու կեղծ, ժողովրդին օտար «հայրենասիրական» այդ մտայնությունը լրջորեն վարկաբեկվեց փետրվարյան ռևոլյուցիայի նախօրյակին, սակայն մի նոր ալիքով այն ասպարեզ իջավ փետրվարից անմիջապես հետո։ Ժամանակավոր կառավարության, էսեռա-մենշևիկյան պարտիաների նկատմամբ զինվորների հավատի օրեցօր մեծացող կորստի պայմաններում, այդ «պատրիոտիզմը» դեռ իրեն որոշ չափով զգալ էր տալիս 1917 թ. գարնան-ամռան ամիսներին։ Դրան նպաստում էր և այն, որ Կովկասյան ռազմաճակատը շատ էր հեռացել մինչպատերազմյան ռուսական հին սահմաններից, մի հանգամանք, որը դժվարացնում էր ռևոլյուցիոն հրդեհից եռացող թիկունքի ազդեցությունը գործող բանակի վրա։ Ռուսական իմպերիալիստական բուրժուազիան ոչ միայն պաշտոնական դիրքերից էր պրոպագանդում իր քաղաքականությունը, այլև այդ բանի համար միջոցներ էր հատկացնում իր խոսափողը հանդիսացող էսեռա-մենշևիկյան պարտիաներին, լուրջ խոչընդոտ չստեղծելով նրանց ագիտացիային։ Քաղաքական հիշյալ հոսանքների ագիտացիայի այդպիսի ազատությունը և այն մղելու լայն հնարավորությունները Կովկասյան ռազմաճակատում լրջորեն խանգարում էին զինվորական մասսաների քաղաքական հասունացմանը։

Մյուս ռազմաճակատների, մասնավորապես առավել ռևոլյուցիոն Հյուսիսային ու Արևմտյան ռազմաճակատների համեմատությամբ Կովկասյան ռազմաճակատում բոլշևիկյան պարտիայի գործունեությանը խանգարող լուրջ հանգամանք էր նաև տեղական բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գործունեությունը, պարտիաներ, որոնք զգալի ազդեցություն ունեին մանր բուրժուական, գյուղացիական, զինվորական զանգվածների վրա։

Անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գործունեությունը պատերազմի տարիներին (հատկապես փետրվարյան ռևոլյուցիայից հետո առաջ եկած ազգային զորամասերի ստեղծման շրջանում) կազմալուծում էր ռևոլյուցիայի ճակատը Անդրկովկասում, Կովկասյան ռազմաճակատի ռուսական ռևոլյուցիոն բանակը կտրում էր ռեակցիայի դեմ ծառացող թիկունքից, Անդրկովկասը նախապատրաստում էր կոնտրռևոլյուցիոն օջախ դարձնել հասունացող սոցիալիստական ռևոլյուցիայի դեմ։

Վերոհիշյալից արդեն դժվար չէ կռահել, որ Կովկասյան ռազմաճակատում բոլշևիկյան ազատ ու լայն ագիտացիայի համար ստեղծված էին չափազանց դժվարին պայմաններ։ Ոչ միայն Պետրոգրադից ու Մոսկվայից, Բաքվից ու Թիֆլիսից ռազմաճակատի հեռու գտնվելը, ոչ միայն Արևմտյան Հայաստանի ադորդակցության միջոցներից գրեթե զուրկ լինելն էր, որ խանգարում էր բոլշևիկների ագիտացիային։ Այդ բանին ուղղակիորեն խանգարում էին անդրկովկասյան կոնտրռևոլյուցիայի միասնական բլոկը՝ անդրկովկասյան հատուկ կոմիտեն, ռեակցիոն գեներալիտետը, մենշևիկներն ու էսեռները, դաշնակներն ու այլ բուրժուական նացիոնալիստները։ Կովկասյան իշխանությունները ուղղակի ցուցում էին տվել ռազմաճակատը ամեն կերպ հեռու պահել բոլշևիկյան «վարակից», փոստում ընդունել բոլշևիկյան թերթեր ու գրականություն, բայց ոչ թե այն ռազմաճակատ ուղարկելու, այլ տեղում ոչնչացնելու համար։

Բուրժուազիայի այսպիսի վճռականությունը, որին խիստ նպաստում էր Ժորդանիայի ու Անդրկովկասյան մենշևիկների այլ պարագլուխների նենգ ու խորամանկ վարքագիծը, իր բացասական դերը խաղաց ռազմաճակատում բոլշևիկյան ագիտացիան անհրաժեշտ խորությամբ ու լայնությամբ ծավալելու գործում։ Զգացվում էր նաև բոլշևիկյան կադրերի, ագիտատորների ու պրոպագանդիստների, մասսաների փորձված ու պայքարում կոփված կազմակերպիչների խիստ էարիք։

Կովկասում աշխատելով նման դժվարին պայմաններում, ստանալով պարտիայի Կենտրոնական կոմիտեի աջակցությունը ինչպես կադրերի, այնպես էլ մամուլի ու գրականության ձեռք բեր-

ման ուղղությամբ, կովկասյան բոլշևիկները, այնուամենայնիվ, իրենց ճշմարտացի խոսքն էին հասցնում պատերազմից հոգնած, ազգային կոտորածներից տանջված զինվորներին։

Բուրժուական ժամանակավոր կառավարությունը, ստանալով էսէռների ու մենշևիկների լայն աջակցությունը, որոշեց վերսկսել հարձակումը Արևմտյան ռազմաճակատում։ Վ. Ի. Լենինը հակահեղափոխական բուրժուազիայի այդ քայլը որակեց իբրև իմպերիալիստական պատերազմի վերսկսում, հակառակ պաշտոնական շրջանների այն աղմուկի, որը փորձում էր հարձակումը ներկայացնել իբրև «հանուն հաշտության» կատարված «վճռական» միջոցառում։

Զինվորների ձեռք բերած սեփական փորձն ու բոլշևիկյան ագիտացիան հունիսյան հարձակման շրջանում խարխլում էին ճակատային բանակը, այն նախապատրաստում հեղափոխական նոր մարտերի համար։

Կոնտրռևոլյուցիան սարսափով էր նայում «հիվանդ» բանակի վրա։ Կովկասյան ռազմաճակատից մի սպա Երևան հասցեագրած նամակում շարության մասին էր թափում այդ բանակի ռևոլյուցիոն զինվորների վրա։ «...Ամբողջ օրը քայլում եմ կախարդվածի պես... ինձ կկործանեն հիվանդ բանակի տխուր, ծանր իրադարձությունները։ Մեզ մոտ շատ վատ է. զինվորները մոռացել են իրենց պարտքը և միայն մտածում են իրենց անձնական շահերի մասին. նրանք գործ չունեն հայրենիքի հետ և խուլ են դեպի զոհողությունների գնալու կոչը... «Չեմ ուզում կռվել, խաղաղություն»— ահա բոլորին հասկանալի լոզունգը... մենք՝ սպաներս, դժբախտ տառապյալներ ենք, չունենք ոչ մի հեղինակություն, և մեր շուրջը փայլատակում են միայն շարությամբ լի աչքեր»[8]։ Նույն զինվորականի մի այլ նամակում, որը գրված է Կովկասյան գրենադերյան երկրորդ դիվիզիայի շտաբից, ռևոլյուցիոն բանակի ու «դավաճան» բոլշևիկների գործունեության քիչ թե շատ ռեյեկտիվ պատկերն էր գծվում «տառապյալ Ռուսաստանի» վիճակի վրա ազացող սեհարյուրյակային սպայի ձեռքով. «Այժմ ես նորից դիրքերում եմ, այլևս ինչու նողկալի կոմեդիա խաղալ և խաբվել անիրականանալի հույսերով՝ թե մենք ինչ-որ բանի պետք ենք։ Բանակ չկա, այլ կան բանդաներ..., որոնք միայն ընդունակ են անկարգություններ սարքելու և ամեն ինչ քանդելու. եթե անգամ կա միջոց Ռուսաստանը փրկելու, ապա կգտնվի ոչ մեզ մոտ, և մի՞թե կա այն մեր դաշնակիցներից որևէ մեկի մոտ։ Տեսնում ես Լյոնյա, ոչ թե միայն քո գործերն են վատ, այլ ամենուրեք վատ է, և ես էլ ավելի եմ տանջվում, որովհետև քաղաքական անց ու դարձը առավել լրջորեն ազդել է բանակի վրա և նա, մեր հարազատը (հին բանակը — Հ. Մ.) մեռնում է դավաճան ձեռքից (նկատի ունի բոլշևիկներին — Հ. Մ.) ստացած արյունոտ, մահացու վերքերից...»[9]։

Վերոհիշյալ սպայի դառնագին լացը ռևոլյուցիոն զինվորը գնահատում էր դասակարգայնորեն միանգամայն հակառակ դիրքերից, ուրախությամբ արձանագրելով. «Ապստամբում են բոլորը ընդդեմ բոլորի»[10]։

Ռևոլյուցիոն նման իրավիճակն էր տիրում նաև Կովկասյան ռազմաճակատի ու մերձճակատային գոտու այլ հատվածներում։ Էրզրումից Կովկասյան բանակային կորպուսի մի չինովնիկ — ռազմական քննիչ Կազանի օկրուգի զորքերի հրամանատարին հասցեագրած նամակում գանգատվում էր Էրզրումում և ռազմաճակատի այդ գոտում տիրող դրությունից։ «Կարգ ու կանոն նույնպես ոչ մի տեղ չկա... բոլորը կարող են միայն խուլիգանություն անել, իսկ լավ բան անել չեն կարող. և այդպիսի դրության պատճառով մեզանում ամենուրեք, ռուսերեն ասած, ամենաիսկական անառականոց է։ Իրոք, ռևոլյուցիայի առաջին օրերին, ասենք... ամեն ինչին նայելը հաճելի էր (նկատի ունի բուրժուազիայի մարտյան ոգևորությունը — Հ. Մ.), իսկ հետո որքան գնաց, այնքան ավելի ու ավելի վատացավ, իսկ թե ինչ կլինի դեռ առջևում, ասելը շատ դժվար է, բայց, իհարկե, լավ բան սպասել չի կարելի։ Այո, սիրելի Կոլյա, այդ մասին գրելը շատ դժվար է։ Առաջին օրերից, երբ արձակուրդից ես եկա այստեղ, գնում էի ժողովների ու միտինգների, բայց այժմ ոչ մի տեղ չեմ գնում, որովհետև բոլոր ժողովներում ու միտինգներում լավ ոչինչ չկա։ Պատահում է, որ խոսում են շատ լավ և կարգին մարդիկ, բայց նրանց լսել չեն ուզում և բղավում են՝ կորչի՛, կորչի՛. ահա դրանից հետո մնում է այդպիսի միտինգներից մի կողմ քաշվել...»[11]։

Կարսի ամրոցի սակրավորների գումարտակից խարկով հասցեագրված մի նամակից[12] տեղեկանում ենք, որ Կարսում հունիսյան օրերին զինվորական շրջաններում տեղի էր ունենում ռևոլյուցիոն պրոցեսի բուռն վերելք։ Հաճախակի տեղի ունեցող ժողովներում ու միտինգներում զին-

8 Նույն տեղում, գ. 99, թ. 316։
9 Նույն տեղում, գ. 127, թ. 103։
10 Նույն տեղում, թ. 260։
11 Նույն տեղում, գ. 99, թ. 266։
12 Նույն տեղում, թ. 287։

վորները զայրույթով քննադատում էին իշխանություններին, որոնք մի քանի ամսում զինվորներին դատարկ խոստումներով խաբելով փաստորեն ի չիք դարձրին Կարսի հերոսական կայազորի փետրվարյան փայլուն նվաճումները, այն «ահեղ իրադարձությունների» պտուղները, որոնց մասին այն օրերին Կարսից տեղեկացնում էին Ռոձյանկոյին, նոր իշխանությանը։ Վերոհիշյալ նամակի հեղինակը սպայական իր դիրքերից նկարագրում էր զինվորների զայրույթը հատկապես այն իրողությունից, որ փետրվարյան ռևոլյուցիայի օրերին այնտեղ ձերբակալված չինովնիկներին ու սպաներին «տեղափոխել են Թիֆլիս, իսկ այնտեղ նրանք ազատ շրջում են, փող են ստանում... և ոչինչ չեն անում»։ Հեղինակը բողոքում էր նաև բանակի մասսայական քայքայումից, զայրույթով գրում էր, որ սպաների կյանքը անապահով է, նրանց հեղինակությունը ընկած է, որ «այժմ... յուրաքանչյուր բոպն զինվորների ուզածդ խումբը կարող է նրան բանտարկել, ծեծել և ոչ ոք պաշտպանություն չի գտնի, որովհետև բոլոր սպաները հայտարարված են կոնտրռևոլյուցիոներներ՝ առանց ջոկելու...»։

Ռեակցիոն սպայությունը չէր կարողանում հանդուրժել մասնավորապես բանակի դեմոկրատացման վերաբերյալ պահանջները, որոնք դնում էին թե՛ զինվորները և թե թիկունքի աշխատավորները։ «Ես,— գրում էր սպան Կարսից,— այժմ շատ չարացած եմ այն քաղաքացիներից, ասենք թեկուզ ուսանողներից, որոնք նստել են թիկունքում և պահանջում են բանակի դեմոկրատացում, իրենց մեջքի վրա փորձած չլինելով, թե ինչ է նշանակում բանակի դեմոկրատացումը. Նրանք չգիտեն, որ այժմ Ռուսաստանում բոլորը, առաջինից մինչև վերջինը, օգտվում են լիակատար ազատությունից։ Բայց նրանք չեն տեսնում և չեն հասկանում, որ Ռուսաստանում միակը և՛ մոռացվածը, և՛ հալածվածը, միակը, որ զրկված է ազատությունից, դա սպայությունն է... Այժմ — թունոտ սարկազմով նկատում է նա,— «աշխարհում ազատագույն դեմոկրատական բանակը» (նկատի ունի Ռուսական ռևոլյուցիոն բանակը — Հ. Մ.)... խեղդում ու ազատություն չի տալիս սպաներին։ Հին իշխանության օրոք ամենավերջին, ամենափոքր մարդը ավելին ուներ, քան այժմ մենք՝ սպաներս»[13]։

Սպայությունը բանակում դա նույն իշխանությունն էր՝ ժամանակավոր կառավարությունը, վերջինիս տեղական, բանակային օրգանը։ Ավելին, նրա մի մասը գալիս էր հնից՝ ցարական սպայակույտից և տեղ-տեղ քարշ էր տալիս իր գոյությունը։ Ակնհայտ է, որ պայքարը սպայության դեմ, նրա աստիճանաբաձ խորացող վարկաբեկումը զինվորների շրջանում, նրա փաստական մերկացումը, անառարկելիորեն վկայում էր էրզրումում, Կարսում և ընդհանրապես Կովկասյան ռազմաճակատում զինվորական մասսաների քաղաքական գիտակցության հասունացումը։

Հունիսյան հարձակման շրջանում բոլշևիկացման բուռն պրոցես էր ապրում մերձճակատային գոտում գտնվող Ալեքսանդրապոլի կայազորը։ Զինվորներից մեկը նկարագրելով այստեղ կատարվող իրադարձությունները, գրում էր. «...Այսօր մեզ մոտ միտինգ եղավ և բոլորը բղավում էին՝ խաղաղություն. ոչ ոք չի ցանկանում կռվել. միայն բուրժուազիան է ուզում շարքից դուրս բերել մեզ։ Մենք սպասում ենք շուտափույթ հաշտության։ Բոլորը բղավում են՝ կորչի պատերազմը... Կալվածատերերից խլում են հողը. մեր ուկրաինացիները պահանջում են ավտոնոմիա. գերմանական ճակատում մերոնք հարձակվում են, իսկ թիկունքում բղավում են՝ կորչի պատերազմը»[14]։

Ամբողջ երկրում ցրված զինվորները իրենց նամակներում քննարկում էին տեղի ունեցող քաղաքական բարդ իրադարձությունները, իրար փոխանցում ոչ միայն մոլորություններ ու միամտություններ, այս կամ այն ճակատում տեղի ունեցող ռևոլյուցիոն շարժման վիճակներ, այլև բոլշևիկացման պրոցես ապրող զինվորների պրոլետարական մտայնությունը՝ այս կամ այն իրադարձության և ընդհանրապես ռևոլյուցիոն երկունք ապրող Ռուսաստանում սպասվող նոր, ավելի վճռական իրադարձությունների առթիվ։ Իր միամտություններով հանդերձ, նախահուլիսյան անցքերի գնահատման տեսակետից բնորոշ է մի զինվորի՝ Կովկասյան ռազմաճակատից հեռավոր Աշինսկ հասցեագրված նամակը. «Քաղաքականության վերաբերյալ այժմ կասեմ. որ դժվար, շատ դժվար է նրանից գլուխ հանելը։ Ես ոչ մի պարտիայի չեմ պատկանում, բայց կարող եմ ինձ ու ինձ դատել առանց կրքերի։ Լենինյանները այնպիսի քաղաքականություն են վարում, որ ինչ ուզում է լինի, պետք է վերջ տալ պատերազմին, որ պատերազմը թշվառ ժողովրդի համար կործանարար է. պատերազմը պետք է միայն նրանց, որոնց նա յուրաքանչյուր օր բարելավում է բերում և հարստացնում... Դուք հասկացեք ու նայեք այդ ամենին և մտեք չքավորների դրության մեջ... Չէ՞ որ մեզ մոտ, Ռուսաստանում, երկաթուղիներում, բանվորները ամսական ստանում են 40

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, գ. 127, թ. 123։

ռուբլի. ես մտածում եմ, որ այդ ռոճիկով ապրել չի լինի։ Դրանից բացի, զինվորներն այս երեք տարվա ընթացքում հոգնել են պատերազմից, իսկ գեռ եկող տարի մեզ սպառնում է ավելին։ Մեզ մոտ (Ռուսաստանում — Հ. Մ.) այս տարի մեծ անբերրիություն էր և եկող տարի մենք կարող ենք մնալ առանց հացի։ Այժմ Մոսկվայում և մյուս քաղաքներում յուրաքանչյուրին օրական տալիս են 3/4 ֆունտ հաց, իսկ ի՞նչ կլինի հետագայում։ Պատերազմը ավարտել 3—4 ամսում, ինչպես մեզ դրան դրդում են նրանք, ովքեր դրանից շահույթ են ստանում, ոչ մի դեպքում չի լինի, այլ այն կշարունակվի դարձյալ մի քանի տարի... Պատերազմին վերջ տալ հնարավոր է միայն ինչպես մեր, այնպես էլ մեր թշնամիների ու դաշնակիցների ամբողջ գիտակից ժողովրդի ապրստամբությամբ։ Իսկ դրա համար ոչ թե հարձակում է պետք, այլ արտասահմանում, բոլոր երկրներում քաղաքականություն (ագիտացիա — Հ. Մ.) տանել է պետք։ Մեզ մոտ ռևոլյուցիան դեռևս բուրժուական է... Բայց դեռ կլինի ժողովրդական ռևոլյուցիա և դա պարտադիր է, որովհետև բուրժուազիան ամենուրեք իր խաղն է խաղում. ասենք՝ նա տպագրում է ամեն տեղ, անգամ պարտիական լրագրերում, որ կալվածատերերին պետք է վճարել հողի դիմաց արդարացի գներով և շատ այլ օրենքներ է մտցնում։ Բայց դա, թվում է, իրենց չի հաջողվի։ Հիմնադիր ժողովի հրավիրման ձգձգումը նույնպես նրանց ձեռքի գործն է։ Նրանք շատ լավ հասկանում են, որ եթե այժմ հրավիրեն Հիմնադիր ժողով. ապա այն օրենքները, որոնք պետք են ժողովրդին, կթելադրի ինքը՝ ժողովուրդը, իսկ պատերազմը ավարտելուց հետո, նրանք ինչ որ ցանկանան՝ այն էլ կյանքում կանցկացնեն... Կարող է պատահել, որ Հիմնադիր ժողովը ձախողվի... Ավելին, նրանք ձգտում են գժտեցնել ժողովրդին և նրանց էլ այդ է պետք։ Այժմ վերադառնամ պատերազմին։ Ասա, խնդրեմ, որպես զինվորական մարդ, ի՞նչ դուրս կգա մեր հարձակումից, եթե մի գունդ կամ երկուսը գնում են, իսկ երրորդը հրաժարվում է... Դեհ, մի խոսքով... ես սպասում եմ, որ ոչ հեռավոր ապագայում քաղաքականության հողի վրա տեղի կունենա ինչ-որ ահեղ բան. չէ՞ որ ժողովուրդը ոչինչ չի ստացել, բացի խոսքի ազատությունից... Մնում եմ սպասելով քաղաքական մեծ իրադարձությունների»15։

Հարցերի բազմազանությունը, դատողությունների առողջ ոգին, մի կողմից՝ վախը մոտալուտ կոնտրռևոլյուցիայից, մյուս կողմից՝ ժողովրդական-սոցիալիստական ռևոլյուցիայի սպասումը մեծ տագնապ են ծնել զինվորի սրտում։ Ո՞ւր է գնում Ռուսաստանը. դեպի կործանում, թե՞ վերածնունդ, նեխում ու քայքայում պատերազմից, թե՞ երկրի կենսունակ ուժերի ստեղծագործ մտքի ու գործերի ծաղկում։ Զինվորի նախկին երկընտրանքը աստիճանաբար տեղի է տալիս բոլշևիզմի «լենինյանների» նկատմամբ ժողովրդի հավատի աստիճանական ամրապնդման առաջ։ Շիկացած քաղաքական մթնոլորտում զինվորը տեսնում էր քաղաքական պարտիաների պայքարի սրումը և ոգում, որ ինչ-որ արտակարգ բան է լինելու, որը նման չպետք է լինի փետրվար-հունիս ժամանակաշրջանին։

Կովկասյան բանակի զինվորական մասսաների բոլշևիկացման հարցերը քննարկելիս չի կարելի մոռանալ, որ հունիսյան հարձակման շրջանում զինվորների մեծամասնությունը դեռևս չէր տեսնում այն ռեալ ուղիները, որոնցով հնարավոր էր դուրս գալ արյունոտ պատերազմից։

Հունիսի սկզբներին Կովկասյան ճակատում ստացված մի նամակում հիմնականում ճիշտ էր ներկայացվում զինվորների մեծամասնության հոգեբանությունը և իրերի վիճակը այդ օրերին. «...Մինիստր Կերենսկին,— ասվում էր նրանում,— մեկնել է ճակատ՝ բանակի մարտունակությունը և, իհարկե, քաղաքացիական կարգապահությունը վերականգնելու համար։ Չէ՞ որ զինվորների մեծամասնությունը, ինչպես և թիկունքը, նրա՝ մինիստրի վրա նայում են ինչպես կուռքի. այդ պատճառով էլ ուղևորությունը մեծ հաջողություն ունեցավ, բայց, իհարկե, ոչ առանց լուրջ միջադեպերի... Մի շարք զորամասեր վերակազմվեցին. հենց ձեր ռազմաճակատից (նկատի ունի Կովկասյան ճակատը — Հ. Մ.) ինքնակամ վլադիկավկազ եկավ մի դիվիզիա, բայց ընդհանրապես զորամասերում ոգին շատ է բարձրացել և ենթադրվում է հարձակում, այլապես խաղաղության հասնելու այլ ուղի չկա»16։

Վերոհիշյալ նամակի «հարձակում, այլապես խաղաղության հասնելու այլ ուղի չկա» մտայնությունը, որը հիմնականում տիրապետող էր զինվորների շրջանում հարձակմանը նախորդող էտապում, Վ. Ի. Լենինը գնահատում էր այսպես. «...Իր խնդիրը կառավարությունը կարող էր իրագործել միայն այն պատճառով, որ նրան հավատացել, նրա հետևից գնացել է բանակը։ Դեպքերը

15 Նույն տեղում, թ. 35—37։
16 Նույն տեղում, թ. 328։

մահ է գնացել, հավատալով, թե իր զոհաբերությունները արվում են հանուն ազատության, հանուն ռևոլյուցիայի, հանուն շուտափույթ հաշտության»[17]։

Զինվորական մասսաների այդպիսի մոլորվածություններ իրրև կանոն ուղեկցվում էր բուրժուազիայի և ընդհանրապես շահագործման դեմ նրանց տածած սրբազան ատելությամբ։ «Մենք ասում ենք, որ թող ամբողջ բուրժուազիան գնա ճակատ և կռվի, այդ ժամանակ էլ նա կհասկանա, թե ինչ է նշանակում շուտով վերջացնել պատերազմը. այլապես նա պատերազմի ժամանակ այնպես է լցրել գրպանները, որ դրանք տրաքվում են... Մենք ասում ենք. պետք է փոխարինել մեր ընկերներին, որոնք նստած են խրամատներում, բայց չեն հարձակվում, այլ պաշտպանվում են, որպեսզի չկորցնեն ազատությունը։ Եվ եթե մենք նորից գնանք հարձակման, այն ժամանակ նորից մեզանից միլիոններ կպլոկեն։ Վերջերս մեզ մոտ ռազմաճակատից եկան պատգամավորներ և մեզանից մի քանիսը հայտարարեցին, որ չեն հարձակվի. այլ մինչև վերջ կպաշտպանվեն...»[18] (ընդգծումները իմն են — Հ. Մ.)։

Ռևոլյուցիոն զինվորը արդեն դեմ է հարձակմանը, բայց նա դեռ կողմ է ռազմաճակատ մեկնելուն և «մինչև վերջ պաշտպանվելուն»։ Բայց չէ՞ որ «պաշտպանվելը» նույնպես իմպերիալիստական պատերազմի շարունակում և ավելի ձգձգում էր նշանակում։ Վերոհիշյալ նամակի հեղինակը Թիֆլիսում տեղավորված 218-րդ հետևակային պահեստային գնդի զինվոր էր, այն գնդի, որ շուտով, գրեթե ամբողջովին, անցնելու էր բոլշևիկների կողմը, ահ ու սարսափ դառնալով անդրկովկասյան կոնտրռևոլյուցիայի համար։

Զինվորը աստիճանաբար մոտենում էր ճշմարտությանը, երբ այդ «սարսափելի պատերազմի» մեղքը գցում էր «կապիտալիզմ», միջազգային իմպերիալիզմի, «Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի կոնտրռևոլյուցիոն դեմոկրատիայի» վրա։ «Ես շարունակում եմ մարդկությանը համարել կապիտալի ստրուկը,— գրում էր զինվորը Բարվից։— Անիծյալ կապիտալը առայժմ գեռ հզոր է և մարդկային արյունը գետի պես հոսում է երկու կապիտալի (նկատի ունի պատերազմող իմպերիալիստական երկու խմբավորումներին — Հ. Մ.) պայքարում. այնպես խորամանկորեն են կապված Ռուսաստանի ձեռքերն ու ոտքերը, որ նա ելք չունի, որովհետև կեղեքված է տնտեսապես»[19]։

Զինվորը դեռ չուներ անհրաժեշտ վճռականություն և դասակարգային-պրոլետարական կոփվածք, որպեսզի դադարեր ախ ու վախ քաշել անորոշ «դեմոկրատիայի» տառապանքների համար։ Հունիսյան օրերի զինվորը դեռևս սարսափում էր «քաղաքացիական պատերազմից», որը սպառնում էր սանձազերծել կադետական բուրժուազիան։

Զինվորները և էսեռա-մենշևիկյան պարտիաների կողմից խաբված աշխատավորները դժվարին էվոլյուցիա ապրելով, հունիսյան հարձակման շրջանում և նրանից հետո թրծվեցին, կոփվեցին, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, վերստեղծվեցին, վարժվեցին, պայքարի հրով նորոգվեցին և անցյալին թողեցին իրենց տատանումներն ու հոգեկան ճգնաժամը։ Այս զինվորներն էլ ռևոլյուցիոն պրոլետարիատի հետ դաշնակցած, նրա աշխարհայացքով հարստացած, դաժան պայքարի մի քանի ամիսներից հետո առանց երերալու գնացին խորտակելու «անիծյալ կապիտալը» և լայն ու ազատ ուղի հարթելու մարդկության առաջընթացի համար։

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 128։
18 ԿՊՌՊԱ., ֆ. 1300, ց. 1, գ. 127, թ. 164։
19 Նույն տեղում, գ. 99, թ. 233։